

լինելով՝ խոմ լաւ նկատում ենք, թէ երբեմն մեր հասարակային գործիչները որքան անտեղեակ են եկեղեցական երեոյթների լաւ և զատ կողմերին, և որքան կիսառ և թիւր հասկացողութիւններ են ունենում ազդային եկեղեցու իրական կարիքների և պահանջների նկատմամբ։

Այսպէս ուրեմն՝ որոշ ուղղութիւն և վերացական սկզբունքներ կարելի է ձեռք բերել նաև օտար միջավայրերում, սակայն լուրջ և դրական ծրագրով գործելու հնարաւորութիւն առողջ միմիայն ուսումնասիրուած իրականութեան գիտակցութիւնն է։ Das Sein soll das Bewusstsein bestimmen—իրականութիւնը պէտք է լինի գիտակցութիւն որոշողը։ Այսպէս է լինում լուսաւոր երկիրներում, նոյն ձեռփ կերպարանափոխուեց վերջին մի քանի տասնեակ տարիններում Ռուսաստանի առաջնորդող գրական դասակարգի ուղղութիւնը և նոյն կարիքը գիտակցելու ենք նաև մենք։

Յակոբ Մանանդեան

Ա. Էջմիածին
Փետր. 22.



ՄԱՏԵՆԱԼԻՕՍՈՒԹԻՒՆ

С. Т. Къ вопросу о порядке производства брачныхъ дѣлъ въ армяно-григоріанской церкви («Вѣстникъ Права» декабрь, 1901).

„Журналъ Министерства Юстиціи“ երաւագիտական ամսաթերթում (1900 թ., սեպտեմբեր) պր. Ն. Գաղեկել մի յօդուած էր զետեղել, որի մէջ մասնագէտ հեղինակը փորձում է ապացուցանել, որ ամուսնական խնդիրներում վերջնական իրաւասութիւնը պատկանում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ «Կավկազ» պաշտօնական օրաթերթում (1900, № 301) Լ. Գ.

ստորագրութեամբ յիշեալ յօդուածին վերաբերեալ մի պատասխան տպուեց, իքըև քննադատութիւն պը. Ն. Գագէեվի կարծիքների:

Խմբագրութեան ստացած այս արտատպութիւնը նույիրուած
է նոյն հարցին, Պր. Ս. բոլոր հիմնական կէտերում համա-
կարծիք է Ն. Փագէվիլին. այս լինքն՝ XI-րդ հատորի 1 մասի
յօդուածների մեկնութեան համար անհրաժեշտ է համարում ու-
շագրութեան առնել նաև «Հայաստանեայց եկեղեցու կանոնա-
կան իրաւունքի ընդհանուր ոգին և միտքը», իսկ ամուսնական
գործերը համարում է «զուտ հոգեոր»՝ ուրեմն և ենթակայ Ամեն-
նայն Հայոց կաթողիկոսի իրաւասութեանը: Պր. Ս. մեկնում
է նաև Պոլոտենիայի մի քանի ուրեմն յօդուածներ (1143, 1132),
փորձելով արտցուցանել, որ Սինոդը ամուսնական հարցերում
խորհրդատու ձայն ունի, իսկ Կաթողիկոսը՝ վճռողական:

Աւրեմն ամուսնական իրաւունքի այս խնդրի վերաբերմամբ
Առողջապահության հրատարակուող մասնագիտական իրաւագանա-
կան ախալթերթերը միեւնույն կարծիքն են յայանում։

S. U.

П.С.В.З.О.Н.Н.И.Р. - 9.0.9.1.0.

1. Բ. Խալաթեանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ՝ առաջաջաբան (էջ 3—23), ը. Նիւթ (էջ 24—79); Հրատարակութիւն «Բանասէր»-ի, Պարփս 1901, 80 (գինն է 50 կ.);
 2. Արտէն, Թող շմէզադքեն. Բարիդ, 1902, 160, էջ 32 (գինն է 50 սանթիմ.):

Մայր Արքունի Տպարանից սահմուած գրեւր.

3. Մարիա Կոբելի, Մի մանկան հոգու պատմութիւն, վէպիկ ոչ մանուկնեցի համար. Ուսւերէնից թարգմանեց Տ. Ա., Վաղարշապատ, 1902, էջ 3—354 (գինն է 1 ըուբի):
 4. Մ. Արեգեան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ: Արտատպած «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ 1901, էջ 3—602, 80 (գինն է 1 ը. 50 կ.):
 5. Հրաչեայ Յ. Աճառեան, Աւումնասիրութիւններ հայկական քարբառախօսութեան, Գ. Քննութիւն Վարարդի քարբառին: Արտատպած 1899թ. «Արարատ»-էն, Վաղարշա-